

քան Պոլտուկներն ու Չեմպրըլէյները...

Տարբեր է նոր դահլիճի ընթացքը նաև հանդէպ Ռուսաստանի: Անգլիոյ աւանդական քաղաքականութեան ղեկավար սկզբունքներէն մէկն եղած է մինչև օրս՝ հարուածել եւ աստիճանաբար տկարացնել Ռուսաստանը, որը իբր թէ իր յառաջխաղացութեամբ ու ծաւալումով կը սպառնայ Հնդկաստանին: Անգլիան կը ձգտէր պարզապէս անդամահատել անգլիին կայսրութիւնը:

Եւ այդ ձգտումը նոր թափ առաւ Ռուսաստանի սովետացումէն յետոյ: Վասնզի Սովետ-Ռուսաստանը իրօք տարերային սլացքով կը մղուէր դէպի բոլոր հորիզոնները «Համաշխարհային Յեղափոխութիւնը» շղթայագերծելու սին երազով, կը մղուէր մանաւանդ դէպի Հնդկաստան, Արևմտան, դէպի Եգիպտոս, դէպի այն բոլոր վայրերը, ուր քիչ թէ շատ հնարաւորութիւն կար՝ ազգայնական կիրքերը գրգռելով՝ ապստամբեցնել ասիական եւ աֆրիկական ցեղերը Անգլիայի դէմ, դուրս վտարել ձօն Պալը իր լայնարձակ շահաստաններէն, խորտակել դրամատիրական մեծագոյն պետութեան ուժի ու հմայքի պատուանդանները:

Թշնամու այդ յամառ եւ մտահոգիչ դրոհին հանդէպ, Մեծն Բրիտանիոյ քաղաքագէտները՝ պահպանողական թէ ազատական՝ մէկ միջոց միայն գտած էին — մասնատել Ռուսաստանը: Անգլիոյ Լանքերով էր, որ Պալթիկեան երկիրները անջատուեցան Ռուսիայէն եւ կազմեցին մի-մի անկախ պետութիւններ: Բայց Արտաքին Գործերու Պաշտօնատունը իր ուշադրութիւնը դարձուցած էր նաև դէպի Ուրբայնա ու Կովկաս: Բրիտանական գործակալները դեռ երէկ, Չեմպրըլէյնի ու Պոլտուկի օրով՝ յարաբերութիւններ կը մշակէին Ուրբայնայի եւ Վրաստանի որոշ տարրերու հետ, եւ կը ձգտէին ստորերկրեայ դաւերով առաջ մղել անջատողական հոսանքը նաև այդ երկիրներու մէջ:

Աւելին: Մեծն Բրիտանիոյ աւանդական մակեալէլիզմը, որ ստէպ բիւրոսֆիլտեան գիծ է ընդունուած եւ խորութիւն չէ դրած միջոցներու մէջ, տրամադիր էր — Կովկասն եւս Ռուսաստանէն դատելու համար — թուրք բա-

նակի աջակցութեանը ղիմելու: Նոյն ձգտումը կը մատնեն եւ Փրանսական կարգ մը քաղաքագէտներ, Ֆրանքլէն Պուլձոն եւ ուրիշներ:

Համաթուրքական եւ համխլամական աստրոթակները տակաւին վառ են թուրքիոյ որոշ տարրերուն մէջ եւ նոյն ինքը քեմալիզմը, անշուշտ, պատեհ առիթի մը կը սպասէ արշաւելու Կովկասի վրայ — ուր միլիոնաւոր թուրքեր կ'ապրին — գրաւելու այդ համեզ պատառը, որ չափով մը կրնայ փոխարինել մեծ պատերազմին կրած ահռելի կորուստները, գրաւելու մանաւանդ Բաքուն, որու նաւթային անսպառ պաշարը հզօր մղիչն է Ռուսաստանի տնտեսութեան, գրաւելու Հայաստանն ու Վրաստանը եւ յառաջ տանելու նուաճողական արշաւը մինչև պարսկական Աղբլէյձան, կոխկռտելով հայ ժողովուրդը իր ճամբուն վրայ:

Տաճկական այդ արշաւանքը կը բաղձան ո՛չ միայն Կովկաս. Աղբլէյձանի թուրք զանդուածները — հակառակ 1918-ի յուսախարութիւններուն — ո՛չ միայն Դաղստանի, Բորչալուի ու այլ վայրերու անգլիտակից իսլամ տարրերը, այլ, տարաբախտաբար... անդամ վրացի գործիչներու մէկ մասը, որոնք միամտօրէն կը հաւատան, թէ ազատ, անկախ Վրաստան մը կրնայ բարօր դոյութիւն մը պահպանել թուրքական երկաթէ օղակով պաշարուած Կովկասի մը մէջ:

1921-ին օր մը, Հոռմի վրացական դեսպանը, իշխան Մաչաբելի — նոյնը, որ մեծ պատերազմի ընթացքին ուրիշ վրացի հայրենասէրներու հետ կազմակերպեր էր ծանօթ վրացական լեզէոնը, որ օսմանեան բանակի շարքերում կուուեցաւ Ռուսաստանի դէմ — կը մասնակցէր մեզի հետ զրոյցի մը, խտայական խոշոր թերթի մը մէկ թղթակցին ներկայութեան: Եւ երբ թղթակիցը շեշտակի հարց դրաւ թէ՛ ինչպէ՞ս հնարաւոր կը տեսնենք Կովկասի ազատագրումը սովետական Ռուսիոյ լուծէն, վրաց դեսպանը, իսկոյն, առանց այլեւայլի, պատասխանեց բառացի՝ թէ «Կովկասը փրկուելի կարող է միայն Մուստաֆա Քեմալի բանակին ներխուժումով»:

Գեգեչկօրի, վրացական զգաստ ու լուսամիտ պարապալուիներէն, երբեմնի արտա-